ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «31» 01 2024թ. № 394-Ա

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 4.1-րդ կետով՝

հրամայում եմ.

1. Հաստատել Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգը՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի
հունվարի 31-ի N 281-Ա հրամանի

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ 2
2. ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 3
3. ՆՊԱՏԱԿԸ 8
4. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9
   - Ձեռներեցության խթանում 9
   - Գիտելիքի ստեղծում 10
   - Գիտելիքի տարածում 11
   - Շուկաների հասանելիություն 12
   - Ռեսուրսների հասանելիություն 13
   - Ենթակառուցվածքների զարգացում 14
5. ԱՄՓՈՓՈՒՄ 16

1. ՆԱԽԱԲԱՆ

1. Ժամանակակից տնտեսություններում սոցիալ-տնտեսական առաջընթացի գլխավոր նախապայմանը գիտելիքն է: Այն տնտեսության արտադրողականության և մրցունակության բարձրացման, տնտեսական աճի ապահովման, սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծման կարևորագույն գործոնն է:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականությունը հիմնվում է գիտելիքի ներմուծման, ստեղծման, արտահանման և դրա արդյունավետ կիրառման վրա: Մասնավորապես, ներդրումների ներգրավումից և զբաղվածության ընդլայնումից բացի, գիտելիքահենք տնտեսության համատեքստում, կարևորվում է կապիտալի և աշխատանքի արտադրողականության բարձրացումը՝ ընդլայնելով քաղաքացիներին հասանելի տնտեսական հնարավորությունների դաշտը և ապահովելով միջազգային մրցունակության կայուն ու երկարաժամկետ աճ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2021-2026 թվականների գործողությունների ծրագրով միջնաժամկետում սահմանել է տնտեսական կայունության ապահովման մի շարք կարևոր թիրախներ, մասնավորապես՝ ՀՆԱ-ի միջին աճի տեմպը հասցնել 7%-ի, օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 6%-ի, տնտեսական բարդության ինդեքսը հասցնել 0.1 միավորի[1]: Կառավարությունը թիրախավորել է նաև համախառն գործոնային արտադրողականության տարեկան առնվազն 5% աճ:

4. Վերոնշյալի իրագործման հիմնական ուղին գիտելիքահենք և նորարարական տնտեսության ձևավորումն է: Վերջինս ենթադրում է միջամտություններ տարբեր ուղղություններով՝ տնտեսական քաղաքականության լայն գործիքակազմի կիրառմամբ, ինչն էլ իր հերթին պահանջում է համակարգային մոտեցում: Հաշվի

[1] Ներկայումս Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների 87.2%-ը գտնվում է - 0.25 մակարդակում և միայն 2.1 %-ն է, որ 0-ից բարձր է:

առնելով վերոգրյալը՝ «Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ) նպատակ ունի սահմանել գիտելիքահենք տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունները, որոնք միասնաբար և արդյունավետորեն կնպաստեն վերը նշված նպատակների իրականացմանը:

5. «Հայեցակարգի իրականացման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության տեսլականից և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում» ծրագրի 4.1-րդ կետի «Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, հաստատումից հետո ծրագրերի մշակում և իրագործում» միջոցառումից:

2. ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

6. «Գլոբալ ինովացիոն ինդեքսի» 2023 թվականին հրապարակված զեկույցում Հայաստանի Հանրապետությունը 132 երկրների շարքում զբաղեցրել է 72-րդ հորիզոնականը:

7. Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսական համակարգի վերաբերյալ տարատեսակ վերլուծություններով վերհանված հիմնական համակարգային խնդիրները հետևյալն են՝

1) **Նորարարությունների ոչ բավարար մակարդակ:** Գլոբալ ինովացիոն ինդեքսի արդյունքներով Հայաստանի Հանրապետության դիրքերը թուլացել են՝ հիմնականում պայմնավորված ինովացիոն արդյունքի (Գիտելիք և տեխնոլոգիական արդյունք և Ստեղծարար արդյունք) ցուցանիշների անկմամբ,

քանի որ ինովացիոն ներդրանքի ցուցանիշների մի մասը նույնիսկ բարելավվել են, իսկ որոշները՝ հետընթաց ապրել (Գծապատկեր 1):

2) **Գիտության մեջ մասնավոր հատվածի կողմից ներդրումների իրականացման անբավարար մակարդակ, այդ թվում՝ կիրառական գիտության մեջ**: Հայաստանի Հանրապետությունում հետազոտության և մշակման աշխատանքներում մասնավոր հատվածի կողմից կատարված ծախսերի մասնաբաժինը կազմում է 16,7%, ինչը Հայաստանի Հանրապետությանը 132 երկրների շարքում դիրքավորում է 71-րդ տեղում: Համեմատությունը համադրելի այլ երկրների հետ ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը զգալիորեն զիջում է մյուսներին այս ցուցանիշով (Ադրբեջան՝ 30.8%, Բելառուս՝ 45%, Էստոնիա՝ 50.1%, Մոլդովա՝ 15.5%, Վրաստան՝ 1.7%, Ղազախստան՝ 47.4%, Լատվիա 27%, Լիտվա՝ 37.3%, Թուրքիա՝ 62.4%, Ուկրաինա՝ 30.5%):



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետության Գլոբալ ինովացիոն ինդեքսի ենթասյունները 2020, 2022 և 2023 թվականներին[2]

[2] World Intellectual Property Organization (WIPO) (2023). Global Innovation Index 2023: Innovation in the face of uncertainty. Geneva: WIPO. DOI:10.34667/tind.48220. Global Innovation Index 2022: What is the future of innovation-driven growth? Geneva: WIPO. DOI 10.34667/tind.46596. Cornell University, INSEAD,

3) **Կրթություն-աշխատաշուկա կապի խզվածք:** Համաշխարհային բանկի ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատատեղերի միայն 66,2%-ն է համապատասխանում պահանջվող կրթությանը, մինչդեռ աշխատողների 5,8%-ը զբաղված է հավելյալ կրթություն չպահանջող աշխատանքներով: Այնուամենայնիվ, 28%-ը կրթված են: Այս ցուցանիշը մոտ է Վրաստանի ցուցանիշին, բայց ավելի բարձր է, քան մյուս համեմատելի երկրներում[3]:

4) **Ինովացիոն գործունեությունների համար ֆինանսների հասանելիության և այլ ռեսուրսների անբավարար մակարդակ:** 2017 թվականին Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից իրականացված «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ինովացիոն գործունեության փորձնական հետազոտության» արդյունքները[4] ցույց են տալիս, որ տնտեսվարողների կողմից ինովացիաներում ներդրումներ չկատարելու հիմնական պատճառները առնչվում են ֆինանսների հասանելիությանը: Մասնավորապես, հարցվածների 77%-ը բարձր և միջին կարևորության պատճառների շարքում նշում է «ոչ բավարար ֆինանսական միջոցները ինովացիայի համար», իսկ 63%-ը՝ «վարկային կամ մասնավոր կապիտալի պակասը»: Ինովացիոն գործունեությունների համար ֆինանսական միջոցների պակասը մեծապես խոչընդոտող համարող կազմակերպությունների մասնաբաժնում մշակող արդյունաբերությամբ զբաղվող խոշոր և միջին կազմակերպությունները կազմել են 14,7%-ը,

---

and WIPO (2020). The Global Innovation Index 2020: Who Will Finance Innovation? Ithaca, Fontainebleau, and Geneva.

[3] World Bank. (2017). FUTURE ARMENIA: CONNECT, COMPETE, PROSPER A Systematic Country Diagnostic, REPORT NO.124816-AM, p. 49. Retrieved from: https://documents1.worldbank.org/curated/en/716961524493794871/pdf/Armenia-SCD-in-Eng-final-04192018.pdf

[4] Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե, Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ինովացիոն գործունեության փորձնական հետազոտության զեկույց, Երևան, 2017 թ., էջ 33, վերցված է https://armstat.am/file/article/rep_inov_2017.pdf:

շինարարությամբ զբաղվողները՝ 66.7%-ը, իսկ կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում՝ 100%-ը (Գծապատկեր 2):

5) **Ենթակառուցվածքների զարգացվածության անբավարար մակարդակ**: Նորարարությունների խթանման համատեքստում կարևոր է ենթակառուցվածքների՝ լաբորատորիաների, թեստավորման կենտրոնների, գրադարանների, ուսուցման կենտրոնների և այլնի հավասար բաշխվածությունը Հայաստանի Հանրապետությունում: Գլոբալ ինովացիոն ինդեքսի (2023) «Ենթակառուցվածքներ» ցուցիչով Հայաստանի Հանրապետությունը 79-րդն է:



Գծապատկեր 2. Ինովացիոն գործունեությունների համար ֆինանսական միջոցների պակասը մեծապես խոչընդոտող համարող կազմակերպությունների մասնաբաժինն ինովացիոն կազմակերպությունների ընդհանուր քանակում ըստ ՏԳՏԴ խմբ. 2-ի և կազմակերպությունների չափի, %[5]

6) **Թվայնացման և թվային հասունության ցածր մակարդակ մասնավոր հատվածում՝ հատկապես փոքր և միջին ձեռներեցության շրջանում (այսուհետ՝ ՓՄՁ):** ՓՄՁ-ները կայուն ու ներառական տնտեսության հիմքն են և զբաղված են ցածրարժեք տնտեսական գործունեությամբ: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության գնահատմամբ 2021 թվականի տվյալների համաձայն՝ ՓՄՁ-ները կազմում են բիզնես ոլորտի բոլոր ձեռնարկությունների գրեթե 99,9%-ը, իսկ միկրո ձեռնարկությունները՝ 94,7%:

[5] Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե, Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ինովացիոն գործունեության փորձնական հետազոտության զեկույց, Երևան, 2017 թ., էջ 33, վերցված է https://armstat.am/file/article/rep_inov_2017.pdf:

ՓՄՁ-ներին բաժին է ընկնում ընդհանուր զբաղվածների 69,6%-ը, և գեներացվում է ավելացված արժեքի մինչև 63%-ը: ՓՄՁ-ների մեծ մասը կենտրոնացած է ցածրարժեք ավելացված արժեք ապահովող գործունեության մեջ, ընդ որում 56%-ը գործում է մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում: Չնայած տնտեսության ոլորտների մեծ մասում ՓՄՁ-ների մասնաբաժինը աննշան փոփոխությունների է ենթարկվել 2018-ից 2021 թվականներին, սակայն մեծածախ և մանրածախ հատվածի մասնաբաժինը զգալիորեն նվազել է (7,8%-ային կետով), մինչդեռ արտադրական արդյունաբերության մասնաբաժինը աճել է (3,1%-ային կետով):

7) **Նորարարությունների և/կամ գիտական նորույթների առևտրայնացման մեխանիզմների ոչ բավարար զարգացվածության մակարդակ:** Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, շահագրգիռ այլ կողմերի գնահատմամբ Հայաստանի Հանրապետությունում գործող ուսումնական և գիտական կազմակերպություններում ստեղծվող գյուտերի և տեխնոլոգիաների ճնշող մեծամասնությունն այդպես էլ չեն վերածվում վերջնական ապրանքի, չեն առևտրայնացվում և չեն կիրառվում: Հիմնական խնդիրը գիտական ներուժի առևտրայնացման մեխանիզմների, անհրաժեշտ ենթակառուցվածքի, գիտություն-տնտեսություն փոխշահավետ և համակարգված կապի բացակայությունն է: Հետազոտության և մշակման վրա կատարվող աշխատանքների մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է ընդամենը 0.2%: Այս ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը զիջում է նաև համաշխարհային միջին ցուցանիշը: Հատկանշական է, որ առաջատար դիրքեր զբաղեցնող երկրներում մասնավոր կազմակերպությունների մասնաբաժինը կատարվող հետազոտության և մշակման ընդհանուր ծախսերի կառուցվածքում գերազանցում է 50%-ը:

8) **Ցածր արտադրողականություն տնտեսության գերակա ճյուղերում (գյուղատնտեսություն, արտադրություն և այլն):** Հաշվարկները ցույց են

տալիս, որ մեկ աշխատողի հաշվով արտադրողականությունը ցածր է Հայաստանի Հանրապետության տնտեսության առաջնահերթ և կարևոր համարվող ոլորտներում, մասնավորապես՝ մշակող արդյունաբերության ոլորտում այն ժամում կազմում է 8.32 ԱՄՆ դոլար, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսության ոլորտում՝ 4.77 ԱՄՆ դոլար, իսկ տեղեկատվություն և կապի ոլորտում՝ 9,79 ԱՄն դոլար[6]:

3. ՆՊԱՏԱԿԸ

8. Գիտելիքահենք տնտեսական համակարգը բաղկացած է տարբեր կառուցվածքային միավորներից, մասնավորապես՝ հիմնական գործող խմբերից (մասնավոր ընկերություններ, ոչ առևտրային կազմակերպություններ, պետական հատված, քաղաքացիական հասարակություն, ուսումնական և գիտական կազմակերպություններում և այլն), տարբեր ինստիտուտներից, ենթակառուցվածքներից, ինչպես նաև դրանց միջև գործող արդյունավետ փոխգործակցությունից: Նշված կառուցվածքային միավորների միասնական և համակարգված աշխատանքի արդյունքում է միայն հնարավոր ապահովել բարձրարժեք և գիտելիքահենք արդյունք թողարկող, արտահանող, մրցունակ տնտեսություն, ինչպես նաև օգտվել նման կայուն և ներառական տնտեսական առաջընթացից բխող սոցիալական և բնապահպանական դրական հետևանքներից:

9. Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն Հայեցակարգի նպատակն է համակարգային մոտեցմամբ սահմանել գիտելիքահենք տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքականության ուղղությունները: Նշված ուղղություններից յուրաքանչյուրով պետք է մշակվեն և իրականացվեն առանձին ռազմավարական միջոցառումներ ու ծրագրեր, որոնք կբխեն Հայաստանի Հանրապետության ռազմավարական

[6] Աղբյուրներ՝ https://armstat.am/am/?nid=202, https://armstat.am/file/article/lab_market_2023_4.2.pdf, https://armstat.am/file/article/lab_market_2023_4.2.pdf, https://armstat.am/file/article/lab_market_2023_5.pdf, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

փաստաթղթերից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրից, ինչպես նաև սույն Հայեցակարգից:

4. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգային ուղղությունները սահմանվում են՝ հիմնվելով արդյունավետորեն գործող գիտելիքահենք տնտեսական համակարգի գործառույթների վրա: Մասնավորապես, արդյունավետ գիտելիքահենք տնտեսական համակարգը պետք է ապահովի ձեռներեցությամբ զբաղվելու, գիտելիքի ստեղծման և տարածման համար բարենպաստ միջավայր, դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների և ենթակառուցվածքների հասանելիություն, ինչպես նաև իրացման համար անհրաժեշտ շուկաների հասանելիություն: Հայեցակարգի յուրաքանչյուր ուղղության նկարագրությունն է՝

Ձեռներեցության խթանում

11. Ձեռներեցությունը նորարարական և գիտելիքահենք տնտեսության շարժիչ ուժն է, քանի որ ձեռներեցների միջև առկա մրցակցությունը և իրացման շուկաների ընդլայնման անհրաժեշտությունը դրդում են վերջիններիս մշտապես ստեղծել նոր արժեք՝ առաջարկելով նոր ապրանք, ծառայություն կամ բիզնես մոդել: Ձեռներեցությունը նաև ներառական և կայուն առաջընթացի, աշխատատեղերի ստեղծման, արտադրողականության բարձրացման, հաճախ նաև սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծման հիմնական գործոնն է: Հետևաբար, ձեռներեցության խթանումը պետք է լինի գիտելիքահենք տնտեսության զարգացման քաղաքականության առանցքում:

12. Ձեռներեցության զարգացման տեսանկյունից առաջնահերթ թիրախներից են՝

1) նոր ձեռնարկությունների ստեղծումը, հատկապես մարզերում և սոցիալապես խոցելի խմբերի կողմից.

2) ձեռնարկությունների արտադրողականության բարձրացում, դրանց թվային փոխակերպում.
3) ձեռնարկությունների երկարակեցության բարձրացում.
4) անցում դեպի տնտեսության բարձրարժեք ճյուղեր:

13. Սույն հայեցակարգի 12-րդ կետում նշված թիրախներին հասնելու նպատակով քաղաքականությունը պետք է ուղղված լինի հետևյալ քայլերին՝

1) ձեռնարկատիրական մշակույթի և կրթության զարգացում.
2) բիզնես միջավայրի շարունակական բարելավում ձեռնարկությունների գործունեության յուրաքանչյուր կենսափուլում.
3) աջակցություն ֆինանսական, մարդկային, տեխնոլոգիական ռեսուրսների հասանելիության ապահովման գործում.
4) իրացման նոր հնարավորությունների և շուկաների ստեղծում:

Գիտելիքի ստեղծում

14. Ուսումնական և գիտական կազմակերպությունները գիտելիքի ստեղծման կենտրոններ են, որտեղ իրականացվում են առաջադեմ հետազոտություններ և մշակումներ: Դասախոսները, հետազոտողները և ուսանողները նպաստում են գիտելիքների կուտակմանը՝ ուսումնասիրությունների և փորձերի միջոցով: Համալսարանների, հետազոտական կազմակերպությունների և մասնավոր հատվածի միջև ամուր կապը (սիներգիան) առանցքային դեր է խաղում գիտելիքի ստեղծումը, կուտակումը և նորարարությունը խթանելու գործում: Նման համագործակցային մոտեցումը ոչ միայն բարելավում է ակադեմիական միջավայրը, այլև նպաստում է իրական կիրառությամբ գիտահանրամատչելի արտադրանքի ստեղծմանը:

15. Տեխնոլոգիաների փոխանցումը հիմնական մեխանիզմն է, որով ակադեմիական շրջանակներում ձեռք բերված գիտելիքները գործնական

կիրառություն են գտնում գործարար աշխարհում: Ուսումնական և գիտական կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ստեղծվել մասնագիտացված գրասենյակներ կամ կենտրոններ տեխնոլոգիաների փոխանցման համար՝ օպտիմալացնելով նորարարության արտոնագրման և լիցենզավորման գործընթացը: Տեխնոլոգիաների փոխանցման հնարավորություններ ընձեռելով՝ համալսարանները նպաստում են հետազոտության արդյունքների առևտրայնացմանը, կայուն տնտեսական աճի ապահովմանը և առաջընթացին:

16. Հարակից ուղղություններից է նաև մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ և հուսալի պաշտպանության համակարգի զարգացումը, որը խթանում է գիտությունն ու նորարարությունը՝ հեղինակների, գյուտարարների, նորարարների համար ապահովելով կայուն նախադրյալներ՝ ստեղծելու մտավոր արժեքներ:

17. Սույն հայեցակարգի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերում նշված թիրախներին հասնելու նպատակով քաղաքականությունը պետք է ուղղված լինի հետևյալ քայլերին՝

1) պահանջարկ ունեցող գիտական արդյունքի ստեղծում բարձրագույն ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական ինստիտուտներում.
2) բիզնեսի և գիտության միջև կապի ձևավորում.
3) տեխնոլոգիաների փոխանցման (տրանսֆեր) հնարավորությունների ապահովում.
4) մտավոր սեփականության պաշտպանության արդյունավետ մեխանիզմների առկայություն:

Գիտելիքի տարածում

18. Տնտեսությունում նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ստեղծումից բացի՝ նույնքան կարևոր է տվյալ տնտեսությունում ստացված գիտելիքի տարածման ունակությունը: Գիտելիքի տարածման համար կարևոր նախապայման է

հանդիսանում համակարգի գործող խմբերի միջև և դրանցից դուրս համագործակցությունների առկայությունը, կապիտալի, այդ թվում՝ մարդկային, ֆինանսական, շարժունակությունը և գլոբալ արժեշղթաներին մասնակցությունը:

19. Այս համատեքստում քաղաքականության հիմնական թիրախը վերոնշյալ մեխանիզմների կիրառմամբ գիտելիքի տարածման ցուցանիշի բարձրացումն է:

20. Նշված նպատակին ուղղված քաղաքականությունը պետք է ապահովի հետևյալը՝

1) գիտելիքի աղբյուրների հասանելիության ապահովում.
2) գիտելիքի փոխանակման հնարավորությունների ստեղծում, դրա հետ կապված ծախսերի նվազեցում.
3) միջոլորտային համագործակցության խթանում.
4) միջազգային համագործակցության և գլոբալ ցանցերին մասնակցության խթանում.
5) գլոբալ շուկաներից տաղանդի, օտարերկրյա կապիտալի ներգրավում.
6) մտավոր սեփականության օգտագործման թույլտվությունների ստացման գործընթացի պարզեցում.
7) բաց նորարարության համար հնարավորությունների ստեղծում:

Շուկաների հասանելիություն

21. Հայաստանի Հանրապետությունում ստեղծվող նորարարական ապրանքները և ծառայությունները պետք է ունենան իրացման լայն հնարավորություններ և դրանց նկատմամբ ձևավորվող կայուն պահանջարկ: Ընդ որում, իրացման հնարավորությունները պետք է լինեն թե ներքին շուկայի, թե արտահանման պոտենցիալի օգտագործմամբ: Այս համատեքստում հատկապես լայն հնարավորություններ կստեղծվեն էլեկտրոնային առևտրի զարգացման շնորհիվ:

22. Շուկաների հասանելիության ուղղությամբ իրականացվելիք քաղաքականության նպատակը պետք է լինի ներքին և արտաքին պահանջարկի հաշվին իրացման նոր հնարավորությունների ստեղծումը:

23. Սույն հայեցակարգի 22-րդ կետում նշված նպատակին ուղղված քաղաքականությունը պետք է ապահովի հետևյալը՝

1) աջակցություն արտահանման պոտենցիալ ունեցող բարձրարժեք արտադրանքի թողարկմանը.
2) աջակցություն որակի ստանդարտների ներդրմանը.
3) էլեկտրոնային առևտրի խթանում, այդ թվում՝ դրա հետ կապված ինստիտուցիոնալ և օրենսդրական բացերի վերհանում.
4) ներքին պահանջարկի խթանում, այդ թվում՝ պետական գնումների շրջանակում:

Ռեսուրսների հասանելիություն

24. Նոր ձեռնարկությունների ձևավորման, գոյություն ունեցողների գործունեության ընդլայնման և արդիականացման համար կարևոր նախապայմաններից է նաև համապատասխան ռեսուրսների՝ ֆինանսական, մարդկային և տեխնոլոգիական, առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը:

25. Նորարարական գաղափարներ մշակելու, դրանք զարգացնելու և առևտրայնացնելու կենսափուլի ընթացքում ձեռներեցները պետք է լայն և հեշտ հասանելիություն ունենան՝

1) *ֆինանսական ռեսուրսներին*, ռիսկային կապիտալ, վարկային գործիքներ, պետական աջակցությամբ տրամադրվող ֆինանսական միջոցներ, սեփական կապիտալի ֆինանսավորում,
2) *մարդկային ռեսուրսներին*, աշխատաշուկայի կարիքների և աշխատուժի առաջարկի միջև համապատասխանելիություն,

3) *տեխնոլոգիական ռեսուրսներին,* գյուտերի, նորարարությունների, տեխնոլոգիաների մասին տեղեկատվության ազատ հասանելիություն օգտագործողներին:

26. Սույն հայեցակարգի 25-րդ կետում նշված ուղղություններով քաղաքականությունը պետք է ապահովի հետևյալը՝

1) ներդրումային շուկայի գրավչության բարձրացում, այդ ուղղությամբ օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերի լրացում.
2) ռիսկային կապիտալի, մասնավորապես՝ վենչուրային և հրեշտակ ներդրումների ծավալի ընդլայնում.
3) այլ պարտքային գործիքների օգտագործման հետ կապված ծախսերի և այլ ռիսկերի նվազեցում.
4) արհեստագործական, միջին մասնագիտական կրթության հնարավորությունների ընդլայնում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան.
5) գյուտերի, նորարարությունների, տեխնոլոգիաների մասին տեղեկատվական բազաների և այլ ենթակառուցվածքների հասանելիության ապահովում:

Ենթակառուցվածքների զարգացում

27. Վերոնշյալ բոլոր հայեցակարգային ուղղություններով աշխատանքերը կարող են արդյունք ունենալ միայն համապատասխան ֆիզիկական և ոչ ֆիզիկական ենթակառուցվածքների առկայության պայմաններում: Սույն Հայեցակարգի շրջանակում դիտարկվում են միայն այն ենթակառուցվածքները, որոնք ուղղակիորեն առնչվում են գիտալիքահենք տնտեսական համակարգի վերոնշյալ գործառույթներին: Մասնավորապես, ձեռներեցության զարգացման, գիտելիքի ստեղծման և տարածման, ռեսուրսների և շուկաների հասանելիության համար կարևոր նախապայման են հանդիսանում տեխնոլոգիական կենտրոնների, տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակների, ոչ ֆորմալ կրթական

կենտրոնների, գիտական-հետազոտական լաբորատորիաների, թեստավորման կենտրոնների, գրադարանների և բազմաթիվ այլ ենթակառուցվածքների առկայությունը: Ընդ որում, ռեսուրսների օպտիմալ օգտագործման առումով՝ կարևոր է նշված ենթակառուցվածքների համաչափ ներկայացվածությունը մարզերում:

28. Ենթակառուցվածքների զարգացման նպատակով իրականացվող քաղաքականությունը կիրականացվի հետևյալ մոտեցմամբ՝

1) պետական ուղղակի ֆինանսավորմամբ ենթակառուցվածքների ստեղծում.
2) պետություն-մասնավոր գործընկերությամբ ենթակառուցվածքների զարգացում.
3) այլ բնույթի աջակցություն մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների կողմից նախաձեռնված և իրականացվող ենթակառուցվածքային ներդրումներին:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

29. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում» ծրագրի 4.1-րդ կետի «Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, հաստատումից հետո ծրագրերի մշակում և իրագործում» միջոցառմանը համապատասխան՝ նախաձեռնվել է սույն հայեցակարգի մշակումը: Վերջինս նպատակ ունի համակարգային մոտեցմամբ լուծումներ առաջարկել Հայաստանի Հանրապետության գիտելիքահենք տնտեսության զարգացման ճանապարհին առկա խոչընդոտները:

30. Սահմանված նպատակներին հասնելու համար հայեցակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից գիտելիքահենք տնտեսության զարգացմանն ուղղված տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները: Յուրաքանչյուր ուղղության համար մատնանշվում են այն առանցքային նախաձեռնությունները, որոնց իրագործումը կնպաստի արդյունավետորեն գործող գիտելիքահենք տնտեսական համակարգի ձևավորմանը:

31. Սույն հայեցակարգի թիրախային ուղղություններով աշխատանքն արդյունավետորեն իրագործելու նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը կհամագործակցի ոլորտի շահառու հանդիսացող այլ պետական գերատեսչությունների, մասնավոր հատվածի, միջազգային կառույցների, և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: